



դուց թերի թողած չինութիւնը: Այժմ երկու տեսակ գործերը յանձնված են մարմնաւոր իշխանութեանը: Թէ ինչպէս կը վերջանան այդ գործերը, միւս անգամ կը յայտնեն «Մշակի» ընթերցողներին:

### Գ. Մատինեանց

### ՆԱՄԱԿ ԴԵՐՔԵՆԻՅ

23 նոյեմբերի

Բագու և Գերբէնը երկու հակապատկեր քաղաքներ են կապից ծով ափը և միմեանցից 18 ժամ հեռաւորութիւն ունեն ջրով: Զարմանալի փոփոխութիւն է տեսնում Բագուից եկող ճանապարհորդը, երբ առաջին անգամ մտնում է այս քաղաքը. այդտեղ նկատում է որ միայն ծովը անփոփոխ պահած է իր բարձրահարկ հրաւիրչները, որովհետև Բագուի վատառողջ օդը տեղ այստեղ մաքուր և առողջարար օդ է ծըծում, նորա անձուկ չլինելից զուր գալով, մտնում է տեղիս ընդարձակ հորիզոնի մէջ, Բագուի գրեթէ անբոյս դաշտերի փոխանակ դառնում է այստեղ պարարտ բուսականութիւն և վայելում է պտուղների քաղցրութիւնը. բայց մի և նոյն ժամանակ չէ պատանում նրան տեսնել Բագուի մոտոպղի խուան ընթացքը, քաղաքին կենդանութիւն տվող հարկաւոր նաւերի-ելուսուտը, բանակիր սայլերի անդադար անց ու դարձը, չէ լսում այլ ևս դաւօդներով ելած վշտը, գործաւորների մուրճի խլացուցիչ ձայները և նաւատինների ուրախ երգերը, այլ այս ամենին փոխանակում է այստեղ մի խոր լուռութիւն, որ երբեմն երբեմն ընդհատվում է ծովի արեան փշրվելու ձայներով և մի քանի փայտարար սայլերի ճրճաւով...

Ինչ որ բնութիւնը զլացել է ամալ Բագուին, առատ պարզաւորել է Գերբէնի և ընդհակառակին:

Ուրիշ անգամի թողնելով այս քաղաքի լուս և վատ կողմերի նկարագրութիւնը, կուզեմ այս անգամ մեր Գերբէնի վաճառականաց դասի ու շարժութիւնը դարձնել նաւահանգստի կարևորութեան վրա, որ շատ զգալի պակասութիւններով մինչ է: Գարբանդը կարող էր արդարև մրցել Բագուի հետ, եթէ ունենար ապահով նաւահանգիստ. Դոգնաւերը և հասարակ նաւերը, որոնք վաճառք են բերում այստեղ վախեւեւալով արհիւն մտնելով մի վերտաղչափ հեռու են կանգնում, որով շատ անգամ մեծամեծ զոտաւորութիւններ են պատահում ապրանքը փոխադրելուց: Երբեմն նաւակները ամբողջ ժամերով խաղալիք են դառնում ալիքներին և քննուկում. շատ ժամանակ են այն շղթանալը, որ այստեղ խորհուրդ պիտի ձգէր ապրանքը զուր տալու կամ ներս ընդունելու համար, եթէ մի փոքր քամի է լինում թողնում է գնում և վաճառականը պիտի սպասեն թէ մէկ էլ երբ պիտի վերադառնայ: Այսպիսով իրենց ապրանքը ուշ են ստանում և ուշ տեղ հասնում, որի պատճառով մնացող ինքը վաճառականը դիտել էր որ-չափ մեծ է: Բայց նա այսուամենայնիւ անտարբեր է մնում և չէ շղթանում այդ զգալի պակասութիւնը. մինչև նաւահանգստի շինութեան համար, տէրութեան գանձարանում ունի 300,000 ռուբլի դրամադուր. թէ ինչպէս չէ պահանջում և չէ աշխատում այդ զգալի վարը իրագործելու համար, ինձ անայտ է:

Գերբէնի հայերը չը նայելով այն մեծ հարուստին, որ ստացան օրօրս ընկնելովը, դարձեալ աշխատում են հասարակաց շահի համար չինած են վայելուչ դարպից օրիորդաց համար որ յունվար ամսին կը բացվի, եթէ ձախորդ հանգամանքներ չը պատահեն:

### Գերբէնցի

### ՆԱՄԱԿ ՍՈՒՐԱՄԻՅ

30 նոյեմբերի

Նս մինչև այժմ չէի հաւատում, երբ ձեր լրագրի գաւառական թղթակիցները զանգատվում էին իրանց անյարմար դրութեան վրա. երբ նրանցից աւելի ճշմարտասէր խօսողը հասարակութեան մի քանի մասակար, հարստահարող անդամներին, հասարակական նախապայտը ված երկայնիներ վրա յարձակվողը, ընդհանուր շահեր պաշտպանող թղթակիցը վախեւում է մութ գիւրբերի փողոցով անցնել, սպասելով անշուշտ

սպառնալի դաժանակները ծածկված փողոցի մութ անկիւններին... և այլն այսպիսի լուրերին ես չէի հաւատում. բայց ի դուր, ես խաբարած եմ...

Փորձով համոզվեցայ որ այդ ողորմելին այդպիսի ազէտ հասարակութեան մէջ չունի ոչ մի բարեկամ. նրան քշում են, նա հեռու է ազրում, կարծես առանձնացած հասարակութիւնը վախեւում է նրա հետ գործ ունենայ. սարսափելի է նրա դրութիւնը. նրան շատերը ատում են: Փողոցով անցնելիս, ի հարկէ գրեւոր կռու, մի կողմից քահանայի մօտ կանգնած հաստափոր երեսփոխանը, միւս տեղից խաբեայ վաճառականը, հարստահարող կայուստատերը, ծոյլ առնուտերը և այլն, նրան մատով են ցոյց տալիս, երեւ իրանց մտքում և ստելով... անլ, թէ մութ գիւրբ կը լինի, տես թէ քո բաժինն ինչպէս ենք եփում... Այսպէս իրանից հեռու քշելով մտորված հասարակութիւնը այդ անաչառ դատաւորին, կորցնում է մի ուսուցիչ, որի միակ և եթ ցանկութիւն էր ոչնչացնել հարստահարողներին, վերացնել զանազան արմատացած նախապաշարմունքը, հանել հասարակութիւնը մօլորութիւնից և ցոյց տալ նրան, որ իր միակ փըրկիչն է ծխականի ուսուցիչը...

Երբեմն այդ կողմերի վարմունքը անմեղ թղթակիցներին հետ համարում է այն աստիճան անհաւատալի իրողութիւններին, որ մարդս մտորվում է մինչև անգամ ընդունել այդ իրականութեան մէջ: Ա, քաղաքից մի թղթակից ինձ օղորդած նամակի մէջ գրում է հետեւելը «... Ես, եղբայր պատուական, գրում եմ թէ ինչու դաղարեցի թղթակցելուց, ինչպէս չը լուս. այն աստիճան ցուսահատացրել են այս կողմերը որ զգով եմ այս տեղ մնալ... Անցեալ շաբաթ երեկոյ, երբ ես գալիս էի եկեղեցուց, ինձ հետևում էին քանի մի կանայք, որոնցից մէկը բոլորի առաջ կարելով անհետացաւ, միւսներն էլ տեսնու զրկեցան, ես ևս շարունակում եմ ճանապարհս դէպի խրճիթ... մէկ էլ տեսնեմ վերելից մի լազան կեղտուղ շուր աջպէս մօտիկ թափված միակ կը շնուրդեմ: Այդպիսով ես մի թղթված միակ կը նմանելի... Կեղտոտութեան թափողը մեր հարուստ երեսփոխանի կիսն էր (որ առաջուց անհետացաւ). նա շարունակում էր հայտնաբեր թափել... ողորմելին իմացել էր որ եկեղեցու անպիսի զուստներ կանգնող գործեր երևան հանողը ես եմ եղել և նա վաղուց երեսփոխան չէ. կ'աշ այս անկարգութեան մասին յայտնել եմ պղծելիային, տեսնե՛ք... սա էլ քեզ դրուստն ասեմ և այլն...»

Արեւ և բան զրիւր. չէ եղբայր, լուս է լուս մնալ, քանթէ հացից զրկվել, ինչպէս այդ պատահում էր ինձ հետ անցեալ ամառ. փոր ինչի դիրք բարձր է ամեն ազգային գործերից. քաղցածը ընդունակ չէ գործելու...

Քող որ մեր հատափոր վաճառականը շարունակել գրել աղքատի սիրտը, թող արդէ երեսփոխանը տարներով ուշացնէ հաշիւներ տալ, կամ երբ տալիս լինի աշխատէ տուս ու փուս մէնակ գործակատարի հետ մտնել եկեղեցի, դուները պիտի փակել ու ուղածի պէս մատենանի տակ (ընդամենը մնում է) գրեն... Կք որ մեր հողեր վարչութիւնն էլ է ատում որ ժողովուրդը եկեղեցական հաշիւներին մէջ խաւանվել իրաւունք չունի... թող ուսումնարանի հոգաբարձուները աստիճանով ուսումնարանի երես չը տեսնեն, ամբաներով ուսուցչին ոտձիկ չը տան. ող է հարցնողը... թող մեր հողեր վարչութիւնը արժանաւոր հովիւներին հալածէ, իսկ տղէտներին թիւը շատացնելով նրանց աւելի խուլ տեղեր ուղարկէ... նրանց խօ այս կողմերը ոչ ոք չէ տեսնում... ինչ հաջաթ...

Անցեալ օր փողոցով անցնելիս ինձ կանգնացրից մի ծերուստ խօսակցութիւնը Ա. դիւրի դաղարեցած քահանայի հետ. «Ախար, ինչ է քո զաղարեցնելու պատճառը, հարցնում էր ծերունին քահանայից, միթէ այդ քո աշխատանքի վարձն է, չեմ հասկանում...» քահանան իսկուտիկ բարկացած էր, «ես էլ չը գիտեմ ինչ ասեմ... պատասխանեց քահանան, ինչ ուզում են անում են, հարցնող կայ, ես զղվեցայ — էհ, տէր-տէր, իմ զուգմանն էլ չընկնի նրանց ձեռքը. մի... Զ... հետեց ինչպէս ուզում է այնպէս խաղացնում է մեր կօշտարողը... ես զարմանում եմ որ մեր լուսաւորված եպիսկոպոսը նրա պէսին սկանչել է գնում ու գրիւմ է մի խեղճ քահանային հացից... ես որ քո տեղ լինեմ, տէր-տէր, քո կարգը վրայ, այնպէս որ չարարում են կը հանեմ ֆառակըս, կը վեր առնեմ մօրուքս, կը փաթեմ մեղի մէջ ու փոստով կողարկեմ իրանց, ասելով Աս թողի զի թոյնը քեզ մա-

տուցանեմ...» դրանից աւելի խօ ոչինչ չունեն տուած. քաղցած խօ չեն ուզում սպասել... Ես չուտով հեռացայ. նրանք շարունակում էին խօսակցութիւնը:

Թողնելը այս բոլորը. միթէ ուրիշ բան չը կայ խօսելու. օրինակ. ող է ատում թէ Սուրամը օրից օր առաջ չէ գնում. ող կարող է մերժել որ Սուրամը հեռուից մի գերմանական մաքուր կօշտիայի չէ նմանում այժմ: Կարող է լինում ես երկաթուղու կայարանից, մտնում ես գիւղ. փողոցները մաքուր աւելած, խճուղու աջ և ձախ նոր մաքուր շինութիւններ. շարունակում ես ձանապարհ դէպի վերև, անցնում ես սե կամերը և դու բոլորովին մտանում ես թէ գտանվում ես մի գիւղում Այս տեղը կատարել փոխում է գիւղիս կերպարանը. խճուղու աջ կողմը, անտասից ոչ հեռու գտանվում է մաքուր քարայէն դատարանը, որ անցեալ ամառ, խորհրդարան, ուսու քահանայի որդի, Բասիանին ինչպէս ասում են, դիտմամբ կրակ տուկց, այրեց բոլոր գործերը և պահանջից գողացաւ մօտ 1000 ռուբլի արքունական փող և թանկագին իրօղններ. այս գործի քննութիւնը դեռ չէ վերջացել. Այս դատարանից վերև ձգվում են քանի մի կարգ մաքուր շինութիւններ, որոնք տեղիս ժամանակաւոր դիւրտական հիւանդանոցներ են որտեղ անցեալ ամառ մօտ 600 հիւանդ զինուորային կային, իսկ այժմ 140-ի հասաւ հիւանդներ թիւը, այնպէս որ բժշկական կամակէտը աւելի շատ է այժմ, քան նոյն իսկ հիւանդները: Այս հիւանդանոցին կից գտանվում է արքունական հացի շտեմարանը, հեռու չէ այստեղից նոյնպէս հեռազրական կայարանը: Սուրամը բացի այս հիւանդութիւններից ունի և տեղական դիւրտական կամ կամանոց, դիւրական վարչութիւն և պօլիտեքցիա, թէն վերջինս միայն անուամբ է այստեղ, որովհետև պիտատար միջտ ուրիշ գիւղերի գործերով է զբաղված և միայն ամբողջ քանի մի անգամ է հանդիպում այստեղ:

Մի երկու խօսք էլ մեր գիւղիս վարչութեան վրա:

Նրանի մեղ, ատում են սուրբամեղք, որ վերջապէս ապառաչեցանք անցեալ անշաբթ հին գերանից. — հին տանուտերը ոչ թէ միայն անարժան էր իր պաշտօնին և երեք տարվայ մէջ ոչինչ չը շինեց, այլ այնպէս խաւան ու կնիքորեց գիւղի գործերը որ ներկայ փորձված տանուտերի բոլոր աշխատանքը համարեա ի դուր է անցնում նրանց կարգի բերելու...

Կրկնայեցէք, դիւրիս բոլոր վարչական գործերը նրա զբաղմունքն էին գտանում. նա վարչութեան համար բնակարան չունէ. խանութի որ դրան մօտ պատահում էր գործ, այնտեղ էլ վճռում էր... Գատարները իրանց առուտորով էին պարապած, գիւղիս վրա հսկողութիւն ամենին չը կար, գողութիւն, թալանութիւն, մաքուրապարտութիւն անպակաս էին գիւղերները:

Կտորում էր գողը հացի մաքարը, բարձուն սայլը ցորենի ջվախներով տանում և սրա նման գողութիւնների ոչ ոք հսկող չը կար: Տատօ Յուրիկիձէի բունը իսկապէս Սուրամն էր. նա իր ընկերներով արձակ շրջում էր ցերեկով. նա էր սպանողը հարուստ վաճառական Միքայէլ Ակոբեանցի, անցնող տարի, ուր կողոպտեց 12,000 ռուբլի ժամի 9-ին փողոցով մանգալ անկարելի էր...

Իսկ այժմ ուրիշ է. այժմեան երիտասարդ տանուտէրը վայելում է ինչպէս հասարակութեան, նոյնպէս պ. գաւառապետի կատարել համակրութիւնը, այս պարոնի աշխատութեամբ կազմվեցան կանոնաւոր գիւղբապաններ, որ հերթով դուրս են գալիս թըռով 16 հօգի բնակիչներին, հրացաններով և չըրում են մինչև լոյս. տանուտէրը նշանակեց նոյնպէս տասնապետներ թըռով 4-և կանոնաւորեց գիւղական վարչութիւնը մի ասանձին բնակարանի մէջ: Վարչութիւնը որ բաղկանում է տանուտերից և երեք դատարաններից, շաբաթ երեք չորս անգամ հաւաքվում ու քննում են գործերը, նրանց կանոնաւոր մատենների մէջ անցնելով այս կողմերում ոչ մի գիւղի վարչութիւնը այնպէս կանոնաւորված չէ, ինչպէս այստեղ: Դնորհի մեր տանուտերի կազմվեցան համբարներ արհեստաւորներից, որոնց ուստաբաշխերին տրված են առանձին իրաւունքներ: Նոյն տանուտերի շնորհով շուտով մեր փողոցները կը լինեն լուսաւորված լպտերներով. ինչպէս լսեցինք հաստատա զորդներից փողը արդէն հաւաքվել է և պատմերը տված է: Մաքրութեան կողմից կարելի է ասել որ Սուրամը այժմ ապահովված է. տաւարը մինչև այժմ մարթնում էր վաճառանոցում, որ գարչահորութիւնից անկարելի էր լինում մօտով անցնել, այժմ մեր

տանուտէրը հետեւելով թիֆլիսի օրինակին, կարգարեց տաւարը գիւղից հեռու մորթել, այժմ տաւարը մորթում են քաւորը վերստ հեռու, իսկ միւսը սայլով բերում են գիւղը վաճառելու երիտասարդ տանուտէրը դիտարութիւն ունի փողոցները լայնացնել և խճուղու աջ ու ձախ ծառեր տնկել: Յանկանում ենք աղողութիւն:

### Վ.

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» եկող տարվայ ստորագրութիւնը արդէն սկսվել է: Բայց ինչպէս միշտ հայերը առհասարակ շատ ուշ են գրվում: Կենց երկի և այս տարի ստիպված կը լինենք յունվար ամսի սկզբից մի քանի օրերով ուշացնել մեր թերթի հրատարակութիւնը, որպէս զի մօտաւորապէս իմանալք ինչքան բաժանորդ ունենք, և բաժանորդների թիւին համեմատ ապկեք լրագրի օրինակները քանակութիւնը:

Երկուշաբթի, դեկտեմբերի 4-ին ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանում քննվեցաւ «ՕՅՕՐԻ» լրագրի խաբարի պ. Նիկօլաձէի գործը որ մեղադրվում էր ցենզուրայից արգելված յօդուածները իր լրագրի մէջ տպելու մասին: Գեկտեմբերի 5-ին գործը վերջացաւ Ռուս լրագրի խաբարի դատարանից արտաքցում է:

«С. Пет. Вѣд.» լրագրին հաղորդում են որ Բաթումի երկաթուղու դժի հետախուզութեան համար տէրութիւնից նշանակված է 26,875 ռուբլի կրեդիտ: Հետախուզութիւնները յանձնված են Ստատիօկուկի ինժեներին:

ԹԻՖԼԻՍԻ Կօրցօգոյայս փողոցում գտնվող Արժուտու գալլէբէում թատրոնական դահլիճի կառուցանելու առաջ է գնում Նոյն գալլէբէի գաւթում շինվեցաւ մի Ֆօտուան, որի մէջ շուրը խիւում է մօտ 3 սաժէն բարձրութեամբ:

Շուտով պէտք է քննվու ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանում ռուս «Тифл. Вѣстн.» և վրաց «Арогэра» լրագրիների գործը ցենզուրայից արգելված յօդուածներ տպելու մասին:

«Մշակի» № 210-ի մէջ վերջացած բանասիրականը կազմված էր պ. Հ. Առաքելեանցից: Տօբպարանական սխալ պատճառով պարոնի ստորագրութիւնը չը մտաւ յօդուածի տակ: Նոյն համարի արտաքին տեսութիւնն էլ շատ մեծ սխալներով տպվեցաւ. տողերը բոլորովին խառնված էին:

Այսօր Գօղթրուս եղբայրների ԹԻՖԼԻՍԻ Ֆրանսիական ցիրկում առաջին անգամ բեմի վրա ներկայացումն կը լինի: Կը ներկայացնեն զեռ ևս թիֆլիսում չը տեսնված կանաչ սատանայ նշանախաղը (պանտամիմ) որին կը մասնակցի ցիրկի ամբողջ խումբը: Նշանախաղի մէջ առաջին անգամ կը դուրս գան Բերլինի թատրոնի 8 պար եկող կանայք:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖՐԱՆՍԻԱ

«Temps» լրագիրը ասում է, որ ձախակողման պատգամաւորները ժողովվեցան Փարիզի խորհրդակցութեան զահչնձում պ. Կըրլօնի նախագահութեան ներքոյ Ահա այս ժողովի արձանադիրը:

Ձախակողմանները անգամների առաջարկութեամբ հրաւիրում են բոլոր անդամներին, որպէս զի այս վերջինները քննական յանձնաժողովի հետ միասին փութացնեն ներկայացնել ժողովին այն հեռագրական րօպումենտները, որոնք տեղի են ունեցել մայիսի 16-ի մինիստրի և իր գործակատարների մէջ, ժողովի մի քանի անդամները տեղեկութիւնները հաղորդեցին թէ ինչ կարծիք ունի նահանգների ժողովուրդը զայլ յունվարի հինգի սենատորական ընտրութիւնների մասին: Այս տեղեկութիւնները շատ գոհացուցիչ են, որովհետև նահանգների հանրապետա-

կան կանդիդատները մասին ժողովը շատ կատարած տեղեկութիւններ ունէր:

«Արքայական գաւառների պատգամաւորները հետզհետեւ սկսում են հասնանալ որ հանրապետական ընտրութիւնները միշտ առաւել են հանդիսանում, և թէ երկրի մէջ ներդաշնակութիւն և համաձայնութիւն պահպանելու համար պէտք է հանրապետականներին ընտրել: Ժողովը ժողովարանն այս կարծիքը մասին ամենահիմնաւոր տեղեկութիւններ է ստացել»:

Մի և նոյն լրագիրը աւելացնում է՝ որ կողմից որ ընտանական յանձնաժողովի թղթերը ժողովուրդը գործը արդէն վերջացած է, և թէ դրա հրատարակութիւնը շուտով լոյս կը տեսնի: Ա. պ. Բրուքի, Չուրտուրի և զբոսը գործակատարների մէջ եղած հեռազրական գրադրութիւնների թիւը հասնում է մօտ 8000-ի: Յանձնաժողովի անդամներից պ. Բէրնար Լավիէրնին են յանձնել կարգի բերել այս ահաբան թղթակցութիւնները: Նա դրանց երեք կարգ է բաժանել. 1) որոնք վերաբերում են մայիսի 16-ի պաշտօնական տարևների ընտրութեանը. 2) որոնք վերաբերում են պաշտօնական կանդիդատների ընտրութեանը և 3) որոնք վերաբերում են այսպէս ասած ընտրողական մրցանակը:

«Journal officiel» լրագիրը մի երկար և մի և նոյն ժամանակ հետաքրքիր յայտարարութիւն է հրատարակել, որը ժողովարանի լուստարութեան և վերջապետից մինիստրը ուղարկել է հանրապետութեան նախագահին ներկայացնելով ձեռնարանական կառավարութեան, և բարձրագոյն ուսման վիճակագրութեան մասին:

«Echo du Nord» լրագիրը ասում է որ պ. պ. սենատոր Ժեսպէն և Կորնի ընդարձակ նամակների հրատարակութեան և զըլխաւոր խորհրդատուների հրաժարականի պատճառով առաջադէմ կուսակցութիւնը հրաժարվել է իր պարտականութիւնը կատարելուց:

«La Jeune république» լրագիրը ասում է որ հանրապետական շրջանի բոլոր նախագահները պէտք է անդադար ժողովին Մարսելից մինչև որ արևմտահայաստանի սուս անունով մի ժողով կազմեն այդ քաղաքում: Պրանսիայի մի քանի քաղաքներում արդէն այդ նպատակով և այդ անունով մի քանի ընկերութիւններ կան:

Լրագիրները ասում են որ Կիլին Մակ-Մահոն այցելեց Միտո փողոցի կուսանոցին, դրանից յետոյ նա գնաց «Նախախնամութիւն» անուանված կուսանոցը:

Փարիզի կոնստիտուցիոնալ մէջ երաժշտութեան պատմութեան դասախոսութիւններ սկսեցին: սկսելու օրը մեծ հանգէս էր:

Ռաստիսոսութիւնների պրօֆեսոր պ. Բուրգո-Բիկուզըն է:

«Indépendance du Midi» լրագիրը որ միայն մի քանի ամիս է, որ սկսուեց հրատարակվել Մոնպելիէում, յայտնում է որ առ ժամանակ նա դադարեցնում է իր հրատարակութիւնը որպէս զի կարգի դին իր խմբագրական գործերը:

ԱՆՅՈՒՆ

«Daily News» լրագիրը հրատարակում է Անգլիայի հետեւի հետազոտը:

Վնեսը Քրիտի գործերի հաղորդակցութիւնը ժամանակագրական կարգի է:

4,000 թիւնով լուսակոմեր գրաւեցին Ալի-Մուաշի ռաւաջի բարձրութիւնները: Նրանք յարձակվեցին անգլական զուեղերի վրա և բաժանեցին նրանց:

«Այսօր մի խումբ իր պաշարեղէններով վերադարձաւ Ջամբուզ, որովհետեւ նա չը կարողացաւ ծանուցարհ բանալ միւս զուեղերի հետ միանալու: Շատ նեղ դրութեան մէջ են:

զօրքերը, և ետանդուն օգնութիւն է հարկաւոր: Ալի-Մուաշիի պահպան զօրքը Բակայից եկած մի նոր գնդով ամրացաւ:

«Gazette civile et militaire» լրագիրը ասում է որ ամֆրիզիները, երկէ յարձակվեցան Պէրսոն գետերալի հրամանատարութեանը յանձնած խմբի վրա Բայբերի հանդէպը գտնված սարաւանդի վրա: Երկու հօգի սպանվեցան, հրամանատարի աակի ձին նոյնպէս սպանվեցաւ:

«Թիւրքիանից սկսած կիրճը պաշտպանված է, և պաշար ամտող զօրքերը չը կարողանալով անցնել, ստիպված են վերադառնալ:

Նոր նոր խմբեր ուղարկվեցան պատերազմի բեւը: Չը նայելով որ հրացանների ձայներ են լսվում, բայց հետեւեցը յայտնի չէ: Երկիւնից սկսված Ալի-Մուաշիում անդադար հրացանի ձայներ են լսվում:

«Ամֆրիզացոց այս փնաը շատ ծանր հետեւեց չի ունենայ, որովհետեւ այստեղ այս միակ ցեղն է որ թշնամի է:

«Times» հրատարակում է հետեւեւ լրբը կուրուով ամրացից:

Բօբեր զօրավարի հեծելազօրների մի խումբ երկէ տասերու թիւանութիւնով կանդից Պէյվարի կրճի վրան ստորոտում ամֆրանական երեք խմբերի հանդէպը, և մտադիր է առաջ գնալ դէպի այդ կիրճը: Տուրացիք աշխատում են արգելել որ այս զօրքը չանցնի:

Երեք գիւղեր, որոնք գտնվում են այն լեռան ստորոտում, որի վրա գտնվում է կուրուով ամրոցը, կրակի մէջ են:

Վաղը հեծելազօրի մի զունդ առաջ կը գնայ դէպի Պէյվար:

ԳԵՐՄԱՆԻԱ

«Reichsanzeiger» լրագիրը մինիստրական մի հրաման է հրատարակել, որով պօլիցիան կայտեր վերադարձի ժամանակ կարգապահութիւն և խիստ հսկողութիւն պէտք է անէ: Ժողովուրդը ուրախութեամբ ընդունեց այս հրամանը: Այս 28-րորդ յօդուածը, ասում է նոյն լրագիրը, որ կազմված է սօցիալիստների դէմ, ամեն ժամանակ պէտք է գործ դրվել ժողովուրդի խաղաղութեանը պահպանելու համար: Առ հասարակ այս հրովարտակը զբուջացնում է թէ ամեն տեսակ ծայրայեղ ժողովների կազմելը և թէ որ և է սօցիալական բերանացի կամ հրապարակաբար ցուցանելներ անելը:

«Indépend. Belge» լրագրի Բերլինի սեփական թղթակիցը ասում է,

«Այսօր մեր շատ ու շէջ աչքի եկող սօցիալիստներից մօտ քառասուն հօգի հրաման ստացան, որ հետանան Բերլինի նահանգից: Այս հրաման ստացողները մէկը պ. Պրիցզէ Բերլինի պարլամենտի պատգամաւոր է, և երկար ժամանակ ընտկվել է այդ քաղաքում: Սրա դէմ այդ ընթացքը անարդար է, որովհետեւ դա իր կուսակցիների մէջ ամենապահաւոր մարդն էր համարվում:

«Ապասում են որ մինիստրութիւնը բացառութիւն կը տայ այս հրամանի և նրա այսպէս խիստ գործադրութեան մասին:

«Սօցիալական շարժումը էլ այնպէս նշանաւոր չէ ինչպէս առաջ, միայն հաւատացնում են, որ դրանք այնու ամենայնիւ գաղտնի հաւաքվում են միայն տաս տարը հօգի: Հաւատացնում են իրր թէ պօլիցիան գտել է դրանց գլխաւոր ժողովների տեղերը:

«Այս հրամանը, որի մասին մենք խօսում ենք, պատրաստվել է ստորագրվել է զարմնի կիրպով, այնպէս որ ժողովուրդը զրա մասին միայն պաշտօնական թերթերում կարգաւոր յետոյ տեղեկութիւն ունեցաւ: Դիւանատուներ, դեռ զրա հրատարակելուց առաջ, ուղարկել է այդ բոլոր նահանգների կուսակցիներին պահանջելով այս վերջիններցի

դրա մասին մանրամասն տեղեկութիւններ: «Ապա՛ծ է որ այդ հրամանը միայն մի տարի իր բուն խտուրթեամբ կը գործարկվի և այս փողոցի պայմանը մեծ դժուարութեամբ նպաստեց հասարակական կարծիքի խաղաղվելուն: Բայց պէտք է խստովանած, որ այդ օրինակի 28-րորդ յօդուածը արդէն օրէնք կը դառնայ սօցիալականների դէմ»:

ԻՏԱԼԻԱ

«Temps» լրագրում կարդում ենք հետեւեւ տեղեկութիւնը:

«Նապօլում արդէն սկսեցին այն չորս միջադեպի ժողովի անդամները հարցուփորձը, որոնք թագաւորի դէմ դաւադրութեան մասնակից ընկելու պատճառով դատարանի էին ենթարկվել: Բոքոն և Մելլից, Շէտտիտո, Չիկարեչէ և Ամատո: Ահա դրանց տուած պատասխանները:

«Աստալանտին հաստատում էր թէ ինքը դրանց հետ ոչինչ յարաբերութիւն չէ ունեցել և թէ մինչև անգամ այս առաջին անգամն է, որ նա լսում է դրանց անունները:

«Միւս չորսն էլ հարցուփորձի ժամանակ բողոքում էին, որ իրանք անմեղ են, և թէ իրանք հանրապետական կուսակցութեան են պատկանում:

«Մելլիցն ասում էր. «Նա ընաւ չեմ պատկանում միջադեպի կուսակցութեան»:

«Նա զարմանում եմ թէ ինչպէս անպատուում են ինձ այսպիսի անուն տալով: Նա մեծ ձինեան հանրապետական եմ և պարծնում եմ դրանով: Նա միջադեպի ժողովի անգամ չեմ և ես ատում եմ այդ աղանդաւորներին: Երկ ինչ կը վերաբերի եղեանագործութեանը, նա ասաց. «Նա ոչինչ չը գիտեմ»:

Շէտտիտոն ասաց. «Նա սօցիալական եմ, ես չեմ կարող և ոչ էլ կամենում եմ այդ ուրանալ: Բայց ես յարգում եմ Աստուծուն, և սիրում եմ իմ ընտանիքը, և ես, միջադեպի կուսակցութեան անդամների նման չեմ մերժում ոչ մէկի և ոչ միւսի գոյութիւնը»:

«Ամատոն ասաց. (սա բանտարկիցաւ մի հետեւի գիտութիւն ձեռքով այն միջոցին երբ սա թանաքի մէջ թաթախած սպունգով ջնջում էր այն հազար յայտարարութիւններից մէկը, որոնք կացրած էին Տօլէզօ փողոցի պատերից, միահեծանների նապօլի գալու աւիթով): «Սա և այն տեղեկութիւնը, որ իբր ես թանաքով ջնջել եմ Տօլէզօ փողոցի յայտարարութիւնները, չը նայելով որ իմ ձեռքերի վրա թանաքի բծեր կային, այնու ամենայնիւ ես ոչ թանաք և ոչ էլ սե ներկ ունեի իմ ձեռքերն»:

«Սակ ինչ կը վերաբերի այն յեղափոխական յայտարարութեանը, որ գտան իմ գրասենյակում, կարծեմ, որ այդ ինձ տուին գործարանների ժողովում: Այդ կարող էր ինձ տալ նոյն իսկ մի ապխտալիւծաւ դրա մէջ փաթակելով իմ գնած ապուխտը: Բայց հաւատարի այն է որ ես դրանից ոչինչ տեղեկութիւն չունեմ»:

«Նա ոչ հանրապետական եմ, ոչ սօցիալական, և ոչ էլ միջադեպիական: Նա պատկանում եմ ազատամիտ կուսակցութեանը և ուրիշ ոչինչ: Սովորային տան հետ Դտալիայում միայնակութիւն եմ ցանկանում»:

«Զիկարեչէն արտասխելով յայտնեց որ անմեղ է»:

«Roma Capitale» իտալական լրագիրը հրատարակել է հետեւեւ նամակը, որ Պասսավանտին գրել է իր մօրը:

«Այս նամակով ներկայանում է քո առաջ քո յանցաւոր որդին: Բայց ես յանցաւոր չեմ, որովհետեւ դուք այս մասին ոչինչ հասկացողութիւն չունեք»:

«Ուղարկեցէք ինձ ձեր սուրբ օրհնութիւնը: «Ողջոյն իմ եղբայրներին, և թող ինձ ներեն»:

«Քաջաւրիցեք այն քաջութեամբ, երբ ձեր ամուսնու մահովան ժամանակ դուք խաչը դրեք նրա ձեռքերի մէջ, և օրհնել սուրբ նրան իր որդկեանցը: Քաջաւրիցեք: Ուղարկեցէք ինձ ձեր սուրբ օրհնութիւնը: Նա ներողութիւն եմ խնդրում ձեզից: Նա ներողութիւն եմ խնդրում մեր նահանգից, ես նրան չեմ վերաւորել»:

ԱՐՄԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Կ. Պօլսից «ՊՈՒՍԵ» լրագրին հեռագրում են հետեւեւ. «Նոր մեծ վիւրի շէնքերին-փաշա ընդունելութեան ժամանակ հայոց պատերազմի շնորհաւորութիւնը լսելուց յետոյ ասաց նրան Ֆրանսիայէն. «Ողորմած սուլթանը, ցանկանալով որ նրա բոլոր նպատակները հաւասար իրաւունք ունենան, յանձնեց ինձ արդարութեամբ վարվել ամենքի հետ ազդութեան և կրօնի մէջ խտրութիւն չանելով: Ասացէք ձեր հօտին, որ հայերը վերաբերութեամբ ես այդ սկզբունքներին էլ հետեւեմ: Նրանց հետ արդարութեամբ կը վարվեմ: Պաշտօնները և տեղերը այսուհետ ամենարժանաւորներին կը տրվեն: Մենք ունենք մի հայրենիք: Դուք եկեղեցիներում էք աղօթում, մենք մզկիթներում, բայց մենք ամենքս է սուլթանի հպատակները և զաւակներն ենք: Իմ գործողութիւնները այդ սկզբունքներին յարմարեցնելով ես ձեռնութեամբ կը կատարեմ սուլթանից ինձ տուած հրահանգները, որովհետեւ ես նրա գաղափարների մենիցն եմ, նրա կամքի կատարողն եմ: Մնաց բարեւ»:

«Բէյութի ընկերութեանը» Հ. Ոսթից հեռագրում են դեկտեմբերի 7-ին, որ պապը իր Միւնխէնի դեսպանի միջնորդութեամբ մէկ նամակ ուղարկեց Վիլհելմ կայսրին, որի մէջ նա շնորհաւորում է կայսրին կրկին կառավարութեան ղեկը իր ձեռքը վերցնելու համար և ցանկութիւն է յայտնում, որ սկսած բանակցութիւնները ցանկացած հետեւեւին կը հասնեն»:

«Հավասի ընկերութեանը» հաղորդում են դեկտեմբերի 7-ին, որ Կ. Պօլսի Ֆրանսիական դեսպան Ֆուրնի դիտաւորութիւն ունէր Ֆրանսիա գնալ, որպէս կանդիդատ սենատօրական ընտրութիւններին ներկայ գտնվելու համար: Բայց նա ստիպված էր յետաձգել իր ձեռնապարհորդութիւնը, որովհետեւ շատ նշանաւոր գործեր ներկայումս ստիպում են մեծ պետութիւնների դեսպաններին անձամբ Կ. Պօլս գտնվել»:

«Ֆրանսիական լրագիրներում կարդում ենք, որ դեկտեմբերի 6-ի նիստում պատգամաւորների ժողովը վերաքննեց անկասկած կերպով ընտրած պատգամաւորների ընտրութիւնները: Աստիկ վիճաբանութիւններից յետոյ, որոնց մէջ նշանաւոր էին բօնապարտիստները, պ. պ. Բիբարան Միլանի և Կորանտինի ընտրութիւնները հաստատվեցան»:

ՄԵՍԿՈՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբերի: Ս. Պետերբուրգի Բժշկական Ակադեմիայում նորում եղած ուսանողների ժողովների պատճառով կալանաւորված են Ակադեմիայի գրքադարանում 142 ուսանողները: «Прав. Вѣстн.» լրագրում հրատարակված է ներքին գործերի մինիստրութեան հրամանը, որով հաղորդվում է գեներալ-զօրեբնատօրներին և նահանգապետներին այն տեղերի, որտեղ զբոսնում են բարձրագոյն դպրոցներ, նոյնպէս և Ս. Պետերբուրգի և Օբէսայի քաղաքապետներին, որ այն օրէնքը որի զօրութեամբ արգելում է զօւմարվել հրապարակներում և փողոցներում, այսուհետեւ կատարելապէս գործադրվելու է և այն հրապարակների վերաբերութեամբ, որտեղ գտնվում են բարձրագոյն դպրոցները: Այս հրաման վրա ադմինիստրացիայի և պօլիցիայի պաշտօնները որ և է դպրոցի ուսումնարանական վարչութեան հրաւիրմամբ, պարտաւոր են ներկայանալ և գործել այդ դպրոցներում հարկաւոր դէպքում օրէնքի ձիւղ հիման վրա»:

